

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 51-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Տուգանքը չվճարելու դեպքում դատարանը տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների երեք ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց: Եթե տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքը գերազանցում է երկու հազար երկու հարյուր ժամը, ապա նշանակվում է երկու հազար երկու հարյուր ժամ: Տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարվող հաշվարկի ժամանակ թվային արժեքները կլորացնելը կատարվում է դատապարտյալի օգտին:»:

Հոդված 2. Օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Հանրային աշխատանքները չկատարելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց: Հանրային աշխատանքները չկատարելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ փոխարինելու համար կատարվող հաշվարկի ժամանակ թվային արժեքները կլորացնելը կատարվում է դատապարտյալի օգտին:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 24-ի քրեակատարողական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 35-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասում «կատարելուց չարամտորեն խուսափող» բառերը փոխարինել «չկատարելու դեպքում» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հանրային աշխատանքները չկատարված են համարվում այն դեպքում, երբ՝».

3) 3-րդ մասի 1-ին կետի «ընթացքում» բառերից հետո լրացնել «դատապարտյալը» բառով.

4) 3-րդ մասի 2-րդ կետի «ընթացքում» բառից հետո լրացնել «դատապարտյալի կողմից» բառերը, «կոպտորեն» բառը հանել և «խախտել» բառը փոխարինել «խախտվել» բառով.

5) 3-րդ մասի 3-րդ կետի «դեպքում» բառից հետո լրացնել «դատապարտյալը» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ սահմանադրական դատարանի 2013 թվականի ապրիլի 23-ի թիվ ՍԴՈ-1082 որոշմամբ: Արդյունքում անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ և լրացումներ կատարել նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքում:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասն այնքանով, որքանով տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը հանրային աշխատանքներով փոխարինելու համար կատարված հաշվարկի արդյունքում համարժեքորեն չի երաշխավորում երկու հարյուր յոթանասուն ժամից պակաս տևողությամբ հանրային աշխատանքների կիրառման իրավական հնարավորություն այն անձանց նկատմամբ, որոնք չունեն տուգանքը վճարելու հնարավորություն՝ արգելափակելով նրանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը, ինչպես նաև տարբերակված մոտեցում չի դրսևորում տուգանքը վճարելու անհնարինության և դրանից խուսափելու հանգամանքների միջև, մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանը 23.04.2013 ՍԴՈ-1082 որոշման մեջ արձանագրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասի նորմերը բովանդակում են իրավակարգավորիչ անհամաչափ միջոցներ՝ պատժի խստացում (դատապարտյալի անձի վիճակի անհիմն վատթարացում) այն դեպքում, երբ առկա չէ դրա կիրառման իրավաչափ հիմքը, և այդպիսի խստացման բացակայություն՝ իրավական համապատասխան հիմքերի

(դիտավորության) հնարավոր առկայության դեպքում: Հետևաբար՝ նաև պետք է փաստել, որ տրվել է փուլային լուծում՝ տալով միայն հանրային աշխատանքներից չարամտորեն խուսափելու հասկացությունը, որն ավելի է դժվարացնում իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդրի լուծումը: Եվ իրավաչափ չէ նշանակված պատժի փոխարինմամբ դրա առավել խստացումը և սահմանադրական դատարանի կողմից ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը

Սույն նախագծերի նպատակն է խաթարված իրավական որոշակիության սկզբունքի վերականգնումը ՀՀ քրեական օրենսգրքում և ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, քանի որ օրենսդրի կողմից հստակ տարանջատում չի դրվել տուգանք վճարելու անհնարինության և չարամտորեն խուսափելու միջև: Համապատասխան նախագծերով կկարգավորվի Սահմանադրական դատարանի ՍԴՈ- 1082 որոշմամբ հակասահմանադրական ճանաչված դրույթները:

ՏԵՂԵԿԱՆՔ 1

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ այլ նորմատիվ իրավական ակտեր ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՏԵՂԵԿԱՆՔ 2

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
 ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ
 ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ
 ՆՎԱԶՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի կամ եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

| Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցությունը | | | | | |
|---|----------------------------------|--|--|--|--|
| Ցուցանիշներ | ընթացիկ (2014) տարի | | Հաջորդող 3 տարիները | | |
| | Ըստ 2014 թվականի պետական բյուջեի | Փոփոխությունը 2014 թվականի պետական բյուջեի համեմատ | 2015 թ. | 2016 թ. | 2017 թ. |
| | | | Փոփոխություն ն ընթացիկ տարվա համեմատ (2014 թվական) | Փոփոխություն ն ընթացիկ տարվա համեմատ (2014 թվական) | Փոփոխություն ն ընթացիկ տարվա համեմատ (2014 թվական) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1. Եկամուտներ | - | - | - | - | - |
| 1.1. պետական բյուջեի եկամուտներ | - | - | - | - | - |
| 1.2. ՏԻՄ եկամուտներ | - | - | - | - | - |

| | | | | | |
|--|---|---|---|---|---|
| 2. Ծախսեր | - | - | - | - | - |
| 2.1. պետական բյուջեի ծախսեր | - | - | - | - | - |
| 2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր | - | - | - | - | - |
| 3. Ֆիսկալ ազդեցության գնահատական | 0 | - | - | - | - |
| 3.1. պետական բյուջե | 0 | | | | |
| 3.2. ՏԻՄ բյուջե | - | - | - | - | - |
| 4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով): | | | | | |
| 4.1. Եկամուտների գնահատում | | | | | |
| 4.2. Ծախսերի գնահատում | | | | | |
| 5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են) | | | | | |